ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՓՈՐՁՈՒՍՈՒՅՈՒՄՆ ԱՄՓՈՓՎԵՑ ՄԻՋՈՑԱՌՄԱՄԲ

ԱրՊՀ մանկավարժություն և մեթոդիկա 3-րդ կուրսի ուսանողները Ստեփանակերտի եղիշե Չարենցի անվան հ. 7 դպրոցում մանկավարժական ակտիվ փորձուսուցման ավարտին կազմակերպեցին հաշվետու միջոցառում՝ ընդգրկելով տարրական դասարանների շնորհալի աշակերտներին:

Ներկա էին ԱրՊՀ դասախոսներ, դպրոցի տնօրենությունը, ուսուցիչներ, աշակերտներ: Մայիսյան եռատոնին նվիրված միջոցառմանն աշակերտները հանդես են եկել ասմունքով, պարային ու երաժշտական կատարումներով:

Իր ելույթում դպրոցի տնօրեն Ա.Պողոսյանը բարձր է գնահատել ուսանողների գիտելիքներն ու հմտությունները՝ նշելով. «Դուք ձեր նպատակին հասել եք այսօր: Դա ոչ միայն ձեր՝ ուսանողներիդ կատարած աշխատանքի արդյունքն է, այլ նաև ձեր ղեկավարների ու դասվարների: Դուք ապացուցեցիք, որ մանկավարժի ձիրք ունեք»:

Փորձուսուցման ղեկավար, մ.գ.թ., դոցենտ Է.Բաղդասարյանը, կարևորելով նման միջոցառումների նշանակությունը ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար, գոհունակություն է հայտնել ուսանողների կատարած աշխատանքից. «Ես հիացած եմ,բառեր չեմ գտնում նկարագրելու այն հիացմունքը, որը ապրում եմ հիմա: Մանկավարժի աշխատանքը բարդ ու պատասխանատու աշխատանք է, և դուք կարողացաք փորձուսուցման ընթացքում կատարել այդ աշխատանքը: Նպատակը իրագործված է»:

Հերմինե ՀԱՅՐՈՒՄՅԱՆ,
ՄՄ 3-րդ կուրս

«ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԻ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Մայիսի 10-ին հոգեբանական կենտրոնի կողմից կազմակերպվեց դասընթաց՝ «Կյանքի իմաստի և հոգեկան առողջության կապը» խորագրով: Դասընթացը վարեց հ.գ.թ., դոցենտ Լուսինե Ղարախանյանը, ում կարծիքով կյանքի իմաստի բացակայության պայմաններում առաջանում է հոգեկան աշխարհի ու հոգեկան գործընթացների դեֆորմացիա:

Նա նշեց, որ անձի սոցիալական օտարման հարաճուն պայմաններում սպառողական գիտակցությունը մարդկանց մեջ առաջացնում է իրերի և երևույթների, դեպքերի ու իրադարձությունների հակասական ընկալում, ինչի արդյունքում արժեզրկվում են անանցն ու հավերժականը, հետևաբար անկայուն և երերուն է դառնում ոչ միայն ներկան, այլև ապագան: Շատ կարևոր է բարու և չարի բարոյական ընտրությունը, որով իմաստավորվում է կյանքը, տառապանքն ու հաճույքը: Կյանքի իմաստի որոնումը օգնում է կազմել ոչ թե սակավառիսկ, կարճաժամկետ նախագծեր, այլ ունենալ վստահություն ու լիարժեք հեռանկարներ: Դասընթացին ներկայացվեցին հոգեկան առողջության բոլոր չափանիշները, մասնավորապես «Նորմ» հասկացությունը: Մատնանշվեցին հոգեկան առողջության պահպանմանն ուղղված հիմնական ուղիները, որով, ըստ հոգեբանի, բոլոր ունկնդիրները փորձեցին իմաստավորել իրենց սուբյեկտիվ հոգեկան բարեկեցությունը: Դասընթացում ներկայացված օրինակները բեկվում էին առօրյա դեպքերի, իրադարձությունների, աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների միջով, ինչը մատուցվող նյութը դարձնում էր առավել մատչելի և իմաստավորված:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զարիհե Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացիր քո համալսարանի մասին:
Այցելիր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»
№ 04 (209)
մայիս, 2018

ԿԱՅԱՑԱՎ ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Ավանդույթի համաձայն՝ մայիսյան եռատոնի կապակցությամբ Արցախի մայր բուհում արիության դաս է վարել ԱՀ ՊՆ, գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը, որին ներկա էր նաև ԱՀ ԿԳՄ նախարար Նարինե Աղաբալյանը:

Նախքան միջոցառման մեկնարկը՝ ներկաները ծաղիկներ են խոնարհել զոհված ուսանող ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին: Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանը կարևորել է հայ ժողովրդի համար իրադարձային նշանակության տոների վերարժևորումն ու արյան գնով նվաճված հաղթանակներին անդրադառնալը:

«Նոր սերունդը սխալվելու իրավունք չունի: Մենք ձեզ հետ միասին պիտի հիշենք պատմության դառը դասերն ու առաջնորդվենք առողջ տրամաբանությամբ ու բանականությամբ»,- երիտասարդներին հորդորել է ռեկտորը:

Ավելի քան մեկ ժամ տևած հանդիպման ընթացքում պաշտպանության նախարարը ներկայացրել է հայկական բանակի անցած ուղին ու ներկան, հակամարտության ներկայիս փուլը, ձեռքբերումներն ու շփման գծում տիրող իրավիճակը:

Ռազմաքաղաքական խմորումների համատեքստում անդրադառնալով մեր տարածաշրջանի առանձնահատկություններին՝ նախարարն իրավիճակը գնահատեց ուղղահայաց և հորիզոնական տեսանկյուններից՝ նկատելով, որ Կովկասը այդ երկուսի հատման կետում է, ասել է թե՝ խաչմերուկում, ուստի մեր առաջնահերթ խնդիրը անվտանգության ապահովումն է:

Դառնալով բանակաշինության ներկայիս փուլին՝ Լ.Մնացականյանը ներկայացրել է զինտեխնիկայի և կենդանի ուժի համալրմանն ուղղված միջոցառումներն ու ծրագրերը. «Ժամանակն է դադարել ժամկետային զինծառայությունը որակել իբրև պարտադիր: Այն, ինչ պարտադիր է, չի կարող արդյունք տալ, ծառայությունը, մարտական հերթապահությունը պետք է միաժամանակ գրավիչ ու հաճելի լինի»,- ասում է նախարարն ու հիշեցնում «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերը:

Բանախոսության ավարտին ուսանողները հարցեր են ուղղել նախարարին: Հավելենք, որ ԱՀ պաշտպանության նախարար Լևոն Մնացականյանը ԱրՊՀ գրադարանին է նվիրել «Ապրիլյան քառօրյա առճակատում» և «Հայացք դրսից» գրքերը:

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ԵՆ

Մայիսի 21-ից 25-ն ընկած ժամանակահատվածում ԱրՊՀ-ում կազմակերպվել էին ամփոփիչ ատեստավորման քննություններ, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններ: Հանձնաժողովների նախագահների կարծիքների և համապատասխան ստորաբաժանումների դիտարկումների վերլուծության արդյունքների մասին հետաքրքրվել ենք ուսումնական գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանից:

Ուսումնական գծով պատասխանատուն, ընդհանուր առմամբ, գոհ է քննաշրջանից: «Շրջայցերի ընթացքում ընդգծված թերություններ և բացթողումներ չեն նկատվել: Մեր դիտարկումները հաստատելու են եկել հանձնաժողովի նախագահի կարծիքները»,- ասում է պրոռեկտորը:

Գ. Սահակյանը, խոսելով խնդիրներից, նշում է, որ դրանց լուծումը հետևողական աշխատանքի արդյունքում է լինելու: Խնդիրներից նա առանձնացնում է թեմաների արդիականությունը, գործնականի և տեսականի հարաբերակցությունը, հետազոտական մասը, ինքնուրույնության աստիճանը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ պրոռեկտորը համալսարանի գիտխորհրդում պատրաստվում է հանդես գալ մի շարք առաջարկություններով, որոնք ենթադրելու են ուսումնական գործընթացի կազմակերպման ուսանողակենտրոն քաղաքականություն:Ինչ վերաբերում է ամփոփիչ ատեստավորման քննությունների վիճակագրական արդյունքներին, ապա ըստ առաջադիմության՝ առաջին տեղում տնտեսագիտության ֆակուլտետն է (գերազանց գնահատական են ստացել քննությանը մասնակցած ուսանողների 68,5 %-ը), երկրորդ տեղում՝ բանասիրականը (գերազանց գնահատական են ստացել քննությանը մասնակցած ուսանողների 55 %-ը), երրորդում՝ բնագիտականը՝ (գերազանց գնահատական են ստացել քննությանը մասնակցած ուսանողների 42.5 %-ը):Միջինից ցածր են մնում հեռակա համակարգի ամփոփիչ քննությունների արդյունքները: Այս ուղղությամբ համալսարանում առանձին մոտեցում է նկատվում, որի շուրջ պրոռեկտորն ասում է. «Անելիքները շատ են, սակայն սպասում ենք բարձրագույն կրթության մասին օրենքի ընդունմանը, որից հետո առավել կհստակեցնենք մեր դիրքորոշումն ու անելիքները»:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

ԱրՊՀ գիտխորհրդի հերթական նիստում վերանայվել են կանոնակարգային մի շարք դրույթներ, հաստատվել ուսման վարձավճարների չափերն ու երաշխավորվել գիտական աշխատանքներ:

Օրակարգային առաջին հարցը վերաբերում էր ուսումնական տարվա ուսման վճարի տարեկան չափերին: Հիմք ընդունելով Կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների ցանկը և ԱրՊՀ համապատասխան կանոնակարգերը՝ գիտխորհուրդը հաստատել է ԱրՊՀ ՊՈԱԿ 2018-2019 ուս.տարվա բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, հայցորդության ուսման վճարի տարեկան չափերը:

Փոփոխություններ են կատարվել ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի տրամադրման կարգում: Այսպես՝ «ԱրՊՀ ուսանողներին ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի տրամադրման և հաշվառման կարգը հաստատելու մասին» կարգում կատարված խմբագրման համաձայն ստուգման գրքույկը ենթակա չէ վերադարձման: Գիտխորհուրդը երաշխավորել է Ղարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված միջազգային կոնֆերանսին ներկայացված հոդվածների տպագրությունը, փակ գաղտնի քվեարկությամբ ընտրել էթիկայի հանձնաժողովի կազմը, այլ հարցերում՝ տպագրության երաշխավորել գիտական աշխատանքներ:Փակ գաղտնի քվեարկությամբ հաշվիչ հանձնաժողովի արդյունքների հիման վրա ձևավորվեց էթիկայի հանձնաժողով՝ հետևյալ կազմով. Այդինյան Շահեն (նախագահ), Մարգարյան Լուսինե (տեղակալ), Սառաջյան Զարինե (քարտուղար), Գալստյան Հասմիկ, Մինասյան Հասմիկ, Գրիգորյան Նարինե, Գրիգորյան Տաթևիկ (ուսանողուհի):

ԿԱՅԱՑԵԼ Է ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Մայիսի 18-ին կայացել է ուսումնական տարվա ուսանողական համագումարը, որի ընթացքում ուսանողական ինքնավար կառույցների պատասխանատուները հանդես են եկել հաշվետվությամբ:

Կանոնակարգի համաձայն՝ ուսանողական համագումարը գումարվում է տարեկան մեկ անգամ՝ օրակարգում ընդգրկելով ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Համագումարի պատվիրակներին ողջույնի խոսք է հղել ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, ամփոփել ուսանողական խորհրդի կատարած աշխատանքները, անդրադարձել որոշ խնդիրների և բացթողումների:

Ռեկտորն, ընդհանուր առմամբ, բավարար է գնահատել ուսխորհրդի աշխատանքը՝ նկատելով, որ այն, նախորդ տարիների համեմատ, գրանցել է որակական աճ. «Այս տարի բավական ակտիվ են եղել ուսանողական խորհրդի աշխատանքները, քանակապես շատ էին միջոցառումները, սակայն մենք դեռևս անելիքներ ունենք համալսարանի կառավարմանը ուսանողների գործուն ներգրավվածության հետ կապված, և ոչ միայն»:

Ռեկտորը նաև շնորհակալություն է հայտնել համալսարանի ողջ անձնակազմին ուսանողական կառույցների հետ տարվող աշխատանքի համար՝ հորդորելով բարելավել մատուցվող ծառայությունների որակը:

2017-2018 ուսումնական տարվա աշխատանքների հաշվետվությամբ հանդես է եկել ՈՒԽ նախագահ Դիանա Խաչատրյանը, ներկայացրել կառույցի նախաձեռնությամբ իրականացված միջոցառումները՝ հատկանշելով «Ուսանող-աշակերտ - զինվոր» ծրագիրն ու Ուսանողական ֆորումը:

Վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունից հետո հաշվետվությամբ հանդես են եկել նաև ֆակուլտետային ուսանողական խորհրդի նախագահները՝ առաջարկելով ՈՒԽ աշխատանքը գնահատել բավարար: Համագումարը ընտրել է նաև վերստուգիչ հանձնաժողովի նոր կազմ:

Համագումարի ընթացքում ելույթներով հանդես են եկել ֆակուլտետի դեկանները, դրական գնահատել կատարած աշխատանքը, ընդգծել ուսանողական կառույցների դերը համալսարանի կյանքում:

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

«Շեռնարկության էկոնոմիկա» դասընթացի շրջանակում ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս Գոհար Սարգսյանի կողմից հայտարարված «Գործարար ծրագրի պատրաստում» մրցույթում հաղթող է ճանաչվել SkyWave թիմը:

«Գործարար ծրագրի պատրաստում» մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած հինգ խմբերը, որոնք ներկայացնում էին ֆակուլտետի տնտեսագիտության տեսություն և ֆինանսներ բաժինների երկրորդ և երրորդ կուրսերի ուսանողները, այսօր ժյուրիին են ներկայացրել իրենց աշխատանքները, մասնավորապես՝ ծրագրի ընդհանուր բնութագիրը, նպատակներն ու խնդիրները, արդյունավետությունը, արժեքը, եկամուտների և ծախսերի տարեկան հաշվարկը, վարկի մարման ժամանակացույցը, մարքեթինգային պլանը, աշխատակազմը և այլն:

Ժյուրիին, որ նախագահում էր ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ն.Ավանեսյանը, իսկ կազմում ընդգրկված էին ամբիոնի դասախոսներ Գ.Սարգսյանը, Ա.Բաղդասարյանը, Ա.Ալեքսանյանը, հաղթող ճանաչեց SkyWave թիմը:

Հաղթող թիմը խրախուսվել է պատվոգրով, մասնակից մյուս թիմերը՝ շնորհակալագրերով:

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ՖԻՆԱՆՍԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՄԲԻՈՆՈՒՄ

Մայիսի 4-ին ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս, ս.գ.թ. Մանուշակ Մկրտչյանի նախաձեռնությամբ կազմակերպվել են գիտաճանաչողական ընթերցումներ՝ նվիրված Ղարաբաղյան շարժման 30-ամյակին:

«Ներդրումներն Արցախում. անցյալը, ներկան և ապագան» թեմայով ընթերցումներով հաշվապահական հաշվառման երրորդ կուրսի ուսանողները ամփոփեցին «Ներդրումների կազմակերպում և ֆինանսներ» դասընթացը՝ ներկայացնելով Արցախի տնտեսական զարգացման 30-ամյա ուղին:

Դասընթացավար Մ. Մկրտչյանը, ամփոփելով միջոցառումը, նկատում է, որ ընթերցումները միաժամանակ մի քանի նպատակի են ծառայում. «Այսպիսով մենք ամփոփում ենք դասընթացի շրջանակներում ստացած գիտելիքներն ու հմտությունները, ուսանողների ինքնուրույն ուսումնասիրություններն ու հետազոտության արդյունքները, ինչպես նաև փոխանակվում փորձով»:

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ՄԱՐՔԵԹԻՆԳԻՑ

Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Իրինա Իշխանյանի նախաձեռնությամբ և բաժնի մագիստրանտների մասնակցությամբ մայիսի 17-ին կազմակերպվել էին գիտական ընթերցումներ:

«Մարքեթինգը շրջանակից դուրս» թեմայով գիտական ընթերցումներին մագիստրանտները ներկայացրել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են սոցիալական հարցումները, սպառողի վարքագիծը, նեոմարքեթինգը, գովազդը՝ որպես մարքեթինգային հաղորդակցության միջոց, թվային մարքեթինգ, բրենդինգը միջազգային մարքեթինգում, փաթեթավորման առանձնահատկությունները, միջազգային կորպորացիաները, ապա ներկայացրել հետաքրքիր փաստեր մարքեթինգի մասին:

«Այսպիսի միջոցառումները գալիս են լրացնելու լսարանային պարապմունքները, ավելացնելու առարկայի շրջանակներում նախատեսված տեսական գիտելիքները՝ միաժամանակ հնարավորություն տալով տեսականը կիրառել գործնականում»,- նկատում է նախաձեռնող Ի.Իշխանյանը:

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԾԱՆԱՉՎԱԾ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

Մայիսի 21-ին ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս Հասմիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ կայացած ուսանողական գիտաժողովը նվիրված էր Ղարաբաղյան շարժման 30-ամյակին:

Բացելով «Մարդու իրավունքների պաշտպանությունը չծանաչված երկրներում» թեմայով գիտաժողովը՝ Հ. Խաչատրյանը ներկայացրել է միջոցառման արդիականությունն ու նպատակը. «Այսպիսի միջոցառումների կազմակերպմամբ մենք նպատակ ենք հետապնդում ուսանողներին և հասարակության լայն հատվածին գիտական մակարդակով ծանոթացնելու սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքներին և ազատություններին, ինչը կարևոր է հատկապես չծանաչված երկրների պարագայում»:

Գիտաժողովի ընթացքում ուսանողները հանդես են եկել զեկուցումներով, որոնք առնչվում են Արցախի նոր սահմանադրության՝ որպես մարդու հիմնական իրավունքների պաշտպանության երաշխիքի, քաղաքացու ազատ լինելու իրավունքի դասակարգման հիմնախնդիրներին, Եվրոպական դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակին և բողոք-գանգատ գրելու գրելաձևին, դատապարտյալների իրավունքներին, Արցախի Հանրապետությունում մարդու իրավունքների դերին և այլն:

Զեկուցումներին հաջորդած ելույթների ընթացքում գիտաժողովին ներկա ԱՀ Գերագույն դատարանի նախագահ Նարինե Նարիմանյանը, ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանը և իրավունքի ամբիոնի անդամները շնորհակալություն են հայտնել համարձակ նախաձեռնության համար՝ առաջարկելով ուսանողներին ձևակերպել առավել հիմնավորված և փաստարկված ելույթներ:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՆ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՈՎ

Ֆինանսահաշվային ամբիոնում ուսումնական պլանով նախատեսված դասընթացները գիտական ընթերցումներով ամփոփելը ավանդույթ է դարձել:

Ֆինանսներ բաժնի երկրորդ կուրսի ուսանողները «Բնակչության կենսամակարդակի վիճակագրություն» թեմայով ընթերցումներով ամփոփել են «Վիճակագրության ընդհանուր տեսություն» դասընթացը, նույն բաժնի երրորդ կուրսեցիները՝ «Տարբեր երկրների ֆինանսական համակարգը» թեմայով ընթերցումներով՝ «Ֆինանսներ» դասընթացը:

Դասընթացավարներ Ասկիհե Բաղդասարյանը և Արևիկ Ալեքսանյանը նկատում են, որ ընթերցումների գաղափարը պարտավորեցնող է այն առումով, որ ուսանողների առջև խնդիր է դրվում դասընթացի շրջանակներում ստացած տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

«Հիմք ընդունելով մեր կողմից առանձնացված երկրների պաշտոնական տվյալները՝ ուսանողներին հաջողվել է վերլուծել տարբեր երկրների ֆինանսական համակարգերը և հանդես գալ սեփական դիտարկումներով»,- ասում է Ա. Ալեքսանյանը:

«Դասընթացի շրջանակներում վիճակագրության ընդհանուր տեսության ուսումնասիրությունից հետո, հիմք ընդունելով Արցախի Հանրապետության վիճակագրական ծառայության կողմից հրապարակած տվյալները, ուսանողների հետ միասին իրականացրել ենք գործնական վերլուծություն, հանդես եկել առաջարկություններով»,- նշում է Ա. Բաղդասարյանը:

Կիսելով հետազոտավերլուծական աշխատանքների փորձից ոգևորված ուսանողների կարծիքը՝ ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ն. Ավանեսյանը ասում է. «Մեր առջև խնդիր ենք դրել թողարկելու մասնագետներ, որոնք առանց լրացուցիչ դասընթացների կարող են տեղավորվել աշխատանքի: Կարծում եմ մենք ճիշտ ռազմավարություն ենք ընտրել»:

ՎԿԱՅԱԳՐԵՐ ԵՆ ՀԱՆՁՆՎԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

Շուշիում տեղի ունեցած Ամերիկայի Հայ իրավաբանական միության տարեկան համաժողովի շրջանակում ԱՄՆ-ից և Կանադայից ավելի քան 40 իրավաբաններ՝ Արցախի ՄԻՊ Ռուբեն Մելիքյանի գլխավորությամբ, հյուրընկալվել էին Արցախի մայր բուհում՝ ծանոթանալու միության հովանավորությամբ գործող ԱրՊՀ իրավաբանական կլինիկայի աշխատանքների ընթացքին:

ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը շնորհակալություն է հայտնել պատվիրակությանը՝ համաժողովի շրջանակում մայր բուհ այցելելու, իրավաբանական կլինիկայի գաղափարի կյանքի կոչմանն աջակցելու և նրա աշխատանքների հաջողությանը հետամուտ լինելու, Ռուբեն Մելիքյանին՝ գործուն աջակցության համար:

«Տարիների մեր երազանքն այլևս իրողություն է, և դա շնորհիվ գործուն այն աջակցության, որ ցուցաբերել է միությունը: Այն միանգամից մի քանի խնդիր է լուծում. նախ ուսանողները ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորություն են ստացել, ապա այն լուծում է նաև սոցիալական խնդիր՝ սպասարկելով հանրությանը»,- նշել է ռեկտորը:

Արցախի ՄԻՊ Ռ.Մելիքյանը, միության ատենապետն ու անդամները պատրաստակամություն են հայտնել՝ հնարավորինս աջակցելու կլինիկայի աշխատանքներին, սատարելու նրա նախաձեռնություններին: Վերջիններս ողջունել են ուսանողների ընդգրկվածությունը կլինիկայի աշխատանքներում, կոչ արել լինել «համարձակ, լայնախոհ, թիրախասլաց»:

Ընթացիկ ժամանակահատվածում իրավաբանական կլինիկայում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ հանդես են եկել իրավունքի ամբիոնի դասախոս Ա.Դանիելյանն ու ուսանողներից Տ.Միքայելյանը, որից հետո հանդիսավոր պայմաններում վկայագրեր են հանձնվել կլինիկայի դասընթացը հաջողությամբ ավարտած ուսանողներին:

ՌԵԿՏՈՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Մայիսի 16-ին ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանի հետ կայացած հանդիպման ընթացքում ուսանողական ինքնավար կառույցների անդամները բարձրացրել են մի շարք հարցեր և խնդիրներ:

Հանդիպման սկզբում ԱրՊՀ պրոռեկտոր Վ. Յարամիշյանը շնորհակալություն է հայտնել ռեկտորին՝ նախորդ հանդիպումների ժամանակ բարձրացված հարցերի գերակշռող մասին լուծումներ տալու համար: Պրոռեկտորը նաև կարևորել է ուսանողական կառույցների դերը համալսարանի կյանքում, ընդգծել հատկապես ընթացիկ տարում նրանց կողմից համազգային հնչեղություն ստացած նախաձեռնությունները:

Ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության նախագահները, բանավեճի ակումբի համակարգողները, իրավաբանական կլինիկայի և հոգեբանական կենտրոնի աշխատանքներում ընդգրկված ուսանողները հանդիպման ընթացքում ոչ միայն հարցեր են ուղղել ռեկտորին և խնդիրներ բարձրացրել, այլև շնորհակալություն հայտնել իրենց նախաձեռնություններին ու գաղափարներին ընդառաջելու համար:

«Համալսարանը պատրաստ է և պատրաստակամ՝ օժանդակելու և ճիշտ ուղղորդելու ուսանողական կառույցների պոտենցիալը, աջակցելու ուսանողների ինքնադրսևորման հարթակի ընդլայնմանը, ազատ և անկաշկանդ քննարկումների հարթակ ստեղծելու, առկա խնդիրներին լուծումներ տալու համար»,- ասել է ռեկտորը:

«ԳՐԱԲԱՐԸ ԵՎ ՄԵՐ ԴՊՐՈՑԸ» ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԳԱՆԱՀՈՂԱԿԱՆ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Օրերս ԱրՊՀ հայոց լեզվի ամբիոնի դասախոսները հանդիպում են ունեցել Ստեփանակերտի Վ. Ջահանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի ուսուցիչների և հումանիտար հոսքի մի խումբ աշակերտների հետ:

Ամբիոնի պրոֆեսոր Օ. Բաբայանը նախ հանդես է եկել «Գրաբարը և մեր դպրոցը» թեմայով բանախոսությամբ՝ շեշտադրելով արդի հայերենի լեզվական իրողությունները պայմանավորող և հիմնավորող գրաբարյան իրողություններ, ապա պատասխանել ուսուցիչների և աշակերտների հարցերին:

Ամբիոնի պատասխանատուների և դպրոցի ղեկավարության միջև ձեռք է բերվել փոխայցելությունների և փոխադարձ դասալսումների պայմանավորվածություն, քննարկվել են նաև բուհ-դպրոց համագործակցության նոր ուղղություններ:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ՝ ԱրՊՀ -ՀՊՏՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

ԱրՊՀ-ՀՊՏՀ համագործակցության շրջանակում ՀՊՏՀ մի խումբ դասախոսներ մայիսի 14-18-ը դասախոսություններ են վարել տնտեսագիտության ֆակուլտետում:

Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասիստենտ, որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, տ.գ.թ. Աննա Փախլյանը, ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դոցենտ, «Նասդաք Օէմէքս Արմենիա» ԲԲԸ և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ վերստուգիչ հանձնաժողովի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, տ.գ.թ. Վահան Բաբայանը և ֆինանսական հաշվառման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Լևոն Սահակյանը հնգօրյա դասընթացների շրջանակներում անդրադարձել են մասնագիտության արդիական այնպիսի խնդիրների, ինչպիսիք են միջազգային տնտեսական հարաբերությունները և դրանց արժութաֆինանսական ասպեկտները, համաշխարհային տնտեսության ժամանակակից մարտահրավերները և Արցախի Հանրապետության՝ արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերությունների հաստատման և խորացման հնարավորությունները, հանրային ֆինանսական ռիսկերի կառավարման գործընթացներում արտաքին աուդիտի դերի և գործունեության առանձնահատկությունները, փոխանցել հաշվապահության վարման գործնական հմտություններ:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում օրերս դասընթացներով հանդես է եկել Հայ-Ռուսական համալսարանի կառավարման, բիզնեսի և տուրիզմի ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Մարիամ Մոմջյանը:

«Զբոսաշրջային գործունեության կազմակերպումը և կարգավորումը Հայաստանում» թեմայով եռօրյա դասընթացների ընթացքում բանախոսն անդրադարձել է ՀՀ կառավարության և լիազոր մարմնի իրավասություններն իրականացնող գործընթացներին, պետական քաղաքականությանը, զբոսաշրջային գործունեության կազմակերպման հիմքերին, զբոսաշրջիկների օրինական շահերի պաշտպանությանն ու անվտանգության ապահովման համակարգին, զբոսաշրջային արտադրանքի մշակմանը, տեխնոլոգիայի ընտրության և շուկայում դրա առաջխաղացմանը և այլն:

Ֆակուլտետի ղեկավարությունն ու ուսանողությունը կարևորում են հայաստանյան գործընկերների ներգրավմամբ դասընթացների կազմակերպումը՝ նշելով, որ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համադրումը տալիս է ցանկալի արդյունքներ:

Ի ՆՊԱՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ

Մայիսի 16-ին ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ «Արցախի Հանրապետության ներդրումները 1995-2016 թվականներին» թեմայով կազմակերպված ճանաչողական ընթերցումներին հրավիրված էին Ստեփանակերտ քաղաքի ավագ դպրոցների աշակերտներ:

Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը ողջունել է աշակերտներին մայր բուհում, դպրոցների ղեկավարությանը շնորհակալություն հայտնել համագործակցության համար, ապա կարևորել բուհ-դպրոց կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումները, որոնցից

մեկն էլ փոխադարձ ճանաչողական այցերն են:

«Այսօր հպարտությամբ եմ նշում, որ մեր բուհի, առանձնապես մեր ֆակուլտետի շրջանավարտները տարբեր ոլորտներում հաջողած մասնագետներ են, ասել է թե՝ պետության կերտման և շենացման գործում անմնացորդ նվիրյալներ»,- ֆակուլտետի գործունեության մասին խոսելիս նշել է դեկանը՝ հույս հայտնելով, որ տնտեսագիտության ֆակուլտետի շարքերը, ի դեմս ներկաների, կհամալրվեն գաղափարապես առողջ և հասուն երիտասարդներով:

Ներկաներին ողջունել են նաև տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի վարիչ Իրինա Իշխանյանը և ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ Նարինե Ավանեսյանը, որից հետո ֆակուլտետի տարբեր բաժինների ուսանողներ ներկայացրել են ֆակուլտետի անցած ուղին ու գործունեությունը, ապա և հանդես եկել «Արցախի Հանրապետության ներդրումները 1995-2016 թվականներին» թեմայով ճանաչողական ընթերցումներով:

Միջոցառման վերջում ֆակուլտետի ղեկավարությունը գրքեր է նվիրել դպրոցների ներկայացուցիչներին և հետագա ակտիվ համագործակցության հույս հայտնել:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՑԻ ՊՐՈԴՅՈՒՍԵՐԻ ՀԵՏ

Մայիսի 22-ին ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզուների բաժնի մի խումբ դասախոսների և ուսանողների հետ հանդիպում է ունեցել ֆրանսիացի պրոդյուսեր Սերժ Ռիքիեն:

Կինոարտադրության ասպարեզում պրոդյուսերը հետաքրքրություն է ցուցաբերում հատկապես ժողովուրդների մշակույթի, ազգային ավանդույթների և խոհանոցի, մասնավորապես ազգային հացատեսակների պատրաստման տեխնոլոգիաների վերաբերյալ: Ռիքիեին Արցախ է բերել արցախյան այցեքարտ դարձած ժենգյալով հացի ֆենոմենը:

«Այսօր ես Արցախում եմ՝ հատկապես նկարահանելու արցախյան ավանդական հացի՝ ժենգյալով հացի պատրաստման գործընթացը՝ այդպիսով աշխարհին ներկայացնելու Արցախը՝ իր հարուստ և բազմադարյա մշակույթով»,- խոստովանում է կինոարտադրողը:

Արցախ կատարած շրջագայություններից ստացած տպավորություններով կիսվելուց հետո հյուրը երիտասարդներից տեղեկացել է իրենց ծրագրերի և ապագայի տեսլականի մասին, պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին:

ԿԱՅԱՑԱՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Մայիսի 10-ին տեղի ունեցավ Արցախյան շարժման 30-ամյակին նվիրված հայոց լեզվի օլիմպիադա: Նախաձեռնողը ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնն էր: Հարցաշարը կազմվել է բ.գ.թ., դոցենտ Շ.Սաղյանի կողմից: Միջոցառման նպատակն էր ոչ միայն ստուգել տարբեր ֆակուլտետների ուսանողների լեզվական գիտելիքների, գործնական ունակությունների աստիճանը, այլև համալսարանում ամրապնդել լեզվական մշակույթի նկատմամբ լուրջ վերաբերմունքը: Սա վերաբերում է ոչ միայն ուսումնական ընթացիկ ծրագրով հայոց լեզու ուսումնասիրողներին, այլև բարձր կուրսի ուսանողներին: Մտքի ճիշտ և գրագետ ձևակերպումը համընդհանուր պահանջ է բոլորի համար: Այս տեսակետից ակնկալվում է, որ տարեցտարի մասնակիցների քանակի փոփոխություններ կլինեն: Անցկացված օլիմպիադայի արդյունքները վկայում են այն, որ ուսանողների մակարդակը բավարար է և անընդհատական ուշադրության ու ցանկության պարագայում ավելի լավ արդյունքներ կարձանագրվեն: Նշենք, որ առավելագույն միավոր հավաքել է ՀԼԳ 2-րդ կուրսի ուսանողուհի Հերմինե Արզումանյանը: Ներկայացնենք օլիմպիադային ներկայացված «Արցա՛խ, ես քեզ հետ եմ» շարադրության հաջողված հատվածներից:

***

«Չգիտեմ ինչու, բայց ես միշտ Արցախը համեմատում եմ մանուշակի հետ: Արցախը տարածքով շատ փոքր է, բայց չափազանց մեծ՝ հայրենասիրությամբ: Մանուշակն էլ փոքր է, բայց բուրումնավետ:

Իմ Արցա՛խ-մանուշա՛կ, թող միշտ խաղաղ երկնքի տակ բացվեն քո գարունները:

Արցա՛խ, ես միշտ քեզ հետ եմ, եղել եմ և կլինեմ: Բուրիր, հավերժիր և շուրջդ համախմբիր համայն հայությանը»:

Սոնա ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ,
ՀԼԳ-II

***

«Արցա՛խ, ես քեզ հետ եմ իմ անսահման հույսով. Արցա՛խ, ես քեզ հետ եմ իմ անսահման հավատով. Արցա՛խ, ես քեզ հետ եմ իմ անսահման սիրով: Ես պատրաստ եմ ամեն ինչ զոհաբերել այդ սիրուն: Եվ երբ գա ժամանակը, ես իմ մայրական սերն էլ կգոհեմ և հպարտ սրտով իմ զավակին կուղարկեմ բանակ»:

Հերմինե ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ,
ՀԼԳ-II

***

«Շատ եմ սիրում հայրենիքս և կարծում եմ, որ յուրաքանչյուր ոք պետք է սիրի այն: Հին է հայրենիքս՝ հայոց աշխարհում գտնվող Արցախը՝ աշխարհից հեռու մի սրբացված հողակտոր, որտեղ թափված են նախնիներիս արյունը, քրտինքն ու արդյունքը, որտեղ թաղված են իմ հանճարեղ նախնիների սուրբ աճյունները»:

Պարույր Մարտիրոսյան,
Զբոսաշրջություն-I

***

«Երբ ես երազում եմ արևկեզ ասֆալտին, ուզում եմ, որ ինձ շոյող հայրենիքն էլ տեսնի իմ երազանքը, իմ մեծ փափագը նրան ծաղկած տեսնելու: Ու եթե անգամ իմ լազուր երկինքն ու մի կերպ կարդացվող«ազատությունը» մնան անցորդների կոշիկների տակ, ուրեմն ավելի լավ՝ երազանքս տարածվում, ներկում է խաղաղ կապույտով ամբողջ Արցախը»:

Շողեր ՍԱՐԳՍՅԱՆ,
Լրագրություն-I

***

«Շողաշատ է մեր երկինքը, այն այսօր պայծառ է, ինչպես երբևէ, քանի դեռ ես եմ Արցախը, դու ես, նա է: Քանի դեռ մենք կանք, Արցախը մենակ չէ: Հիմա արդեն հորից որդի մենք ենք տերը մեր երկրի, մենք պետք է ասենք. «Արցա՛խ, իմ երկի՛ր, իմ հա՛յ հող, ես քոնն եմ, ես քեզ հետ եմ»:

Ալյոնա ԻՍՐԱՅԵԼՅԱՆ,
Լրագրություն-I

***

«Արցախը հզոր է, քանի որ Արցախի զինվորը մենակ չէ, նրան է սպասում մի ողջ ազգ: Այդ ազգը նույնպես պայքարում է և երբեք իր զինվորին մենակ չի թողնի:

Ես էլ եմ ասում. «Արցա՛խ, ես քեզ հետ եմ: Քեզ հետ է իմ ընտանիքը, ազգն ու գերդաստանը: Արցա՛խ, քեզ հետ է ողջ հայությունը»:

Անի Ազատյան,
Անգ. լ. և գրակ.-I

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԹԵՍՏԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՊՀ-ՈՒՄ ԷՐ ՀՀ ԳԹԿ ՓՈԽՏՆՕՐԵՆԸ

ԱրՊՀ ղեկավարության հրավերով այս օրերին համալսարանի մի խումբ դասախոսների հետ հանդիպում է ունեցել ՀՀ ԳԹԿ փոխտնօրեն Արսեն Բաղդասարյանը:

Ներկայացնելով Ա.Բաղդասարյանին՝ ԱրՊՀ ուսումնական գծով պրոռեկտոր Գ.Սահակյանը նկատել է, որ գիտելիքների ստուգման թեստային եղանակին անցնելու ժամանակ նպատակահարմար են գտել մասնագետ հրավիրել՝ ուղղորդելու գործընթացը:

«Համապատասխան մասնագետ հրավիրելով՝ նպատակ ունենք ձևավորելու հանձնախումբ, որը կզբաղվի առարկայական թեստերի որակի բարելավմամբ: Այսինքն՝ դասընթացների արդյունքում մասնակիցները ձեռք կբերեն թեստեր կազմելու հմտություն, որը և կփոխանցեն գործընկերներին»,- ասում է Գ.Սահակյանը:

«Թեստավորումը դիտարկվող ոլորտում գնահատման այնպիսի գործիքների ստեղծումն է, որը հնարավորություն կտա առավելագույնս ճշգրիտ հաշվարկելու գիտելիքի չափն ու աստիճանը»,- ասում է Ա.Բաղդասարյանը և խոստանում կարճ ժամանակահատվածում հնարավորինս լայն պատկերացում տալ թեստաբանության պահանջների վերաբերյալ: Նշենք, որ դասընթացները տևել են երեք օր՝ ներառելով ներկայացուցիչներ բոլոր ամբիոններից:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏԻ ՀԵՏ

Մայիսի 24-ին ԱրՊՀ-ում հյուրընկալվել էր Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) աֆրոամերիկյան և հաղորդակցության ուսումնասիրությունների պրոֆեսոր Փոլ Ֆոն Բլումը, ով հանդիպել է համալսարանականների հետ, հանդես եկել դասախոսությամբ:

ԱրՊՀ պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, ներկայացնելով հյուրին, ընդգծել է պրոֆեսորին, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված նրա գործունեությունը: Բացի այս, Ֆոն Բլումն իր մանկավարժական գործունեության ողջ ընթացքում զբաղվել է Հայոց ցեղասպանության ուսումնասիրությամբ, հանդես եկել այն դատապարտող ելույթներով և հոդվածներով:

Ցեղասպանության նկատմամբ նրա հետաքրքրությունը պատահական չէ. Ֆոն Բլումը Հոլոքոստից փրկված մի ընտանիքի շառավիղ է, ով, ծնողներից լսելով ցեղասպանական գործողությունների մասին, լծվել է այն դատապարտելու և հատուցում պահանջելու գործին:

Պրոֆեսորին Արցախ է բերել մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ հետաքրքրությունը, որտեղ նա տեսնում է 1915-ի ցեղասպան գործողությունների շարունակությունը: Այս կապակցությամբ բանախոսը նշել է. «Արցախի պատմության և մշակույթի մասին տեղեկություններս խորքային չեն և հենց դրա համար է, որ այստեղ եմ: Ավելի քան կեսդարյա մանկավարժական գործունեության ընթացքում ուսանողներիս Հայոց ցեղասպանության մասին եմ դասախոսել, իսկ այժմ դրան պետք է գումարվի նաև Արցախի մասին իրապատումը»:

Ներկաները տարաբնույթ հարցեր են ուղղել բանախոսին, կիսվել կարծիքներով, հանդես եկել համագործակցության առաջարկությամբ:

ԱՐՊՀ-ՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ՍՈՑԻՈԼՈԳ ՌԱՍԱ ԱԼԻՇԱՈՒՍԿԵՆԵՆ

Ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում մայիսի 23-ին «Հետազոտությունների դերը հասարակական գիտակցության ընկալման համատեքստում» թեմայով դասախոսությամբ հանդես է եկել լիտվացի սոցիոլոգ Ռասա Ալիշաուսկենեն:

Ողջունելով հյուրին՝ ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանը ներկայացրել է նրա մասնագիտական կենսագրությունը, ապա շնորհակալություն հայտնել այցելության և դասախոսության համար: Բանախոսը նախ սահմանել է հասարակական գիտակցություն և հասարակական կարծիք հասկացությունները՝ նշելով, որ հասարակական կարծիքը առանձին անհատների կարծիքների հանրագումարն է, որ հնչում է առավել հավաստի: Իսկ թե ինչպես է ձևավորվում այն և տարածվում, մանրամասնել է. «Եթե որոշ ժամանակ առաջ հասարակական ձևավորված կարծիքը տարածման մեկ կամ մի քանի տարբերակներ էր ճանաչում, ասենք՝ հեռուստատեսություն, ռադիո, մամուլ, ապա այսօր սոցիալական ցանցի ընձեռած հնարավորությունները առավել քան լայն են»:

Ռ. Ալիշաուսկենեն իր և իր ղեկավարած հետազոտող խմբերի ուսումնասիրություն-վերլուծություններից նախապես առանձնացրած որոշ տվյալներ է հաղորդել լսարանին՝ ներկայացնելով մի քանի երկրների առանձնապես ազգային դիմագիծը բնորոշող բնութագրիչներ:

Դասախոսությունից հետո բանախոսը պատասխանել է ներկաների հարցերին, ծավալվել է քննարկում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԻՎԱՆԱԳԵՏ ԴԱՐԻԼ ՔՈՓԼԵՆԴԻ ՀԵՏ

Մայիսի 11-ին ԱրՊՀ մի խումբ դասախոսների և ուսանողների հետ հանդիպում է ունեցել վերլուծաբան, դիվանագետ, միջազգայնագետ Դարիլ Քոփլենդը:

ԱրՊՀ պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը ներկայացրել է արդեն երկրորդ անգամ Արցախում գտնվող դիվանագետին, մանրամասնել նրա աշխատանքային գործունեության որոշ դրվագներ:

Քոփլենդն իր ելույթը կառուցեց ի՞նչ է դիվանագիտությունը և ինչու՞ է այն կարևոր, ապա անցում կատարեց հայկական դիվանագիտության ձեռքբերումներին՝ շեշտելով երկխոսելու արվեստն ու փոխզիջումների մեխանիզմները:

Խոսելով կարճաժամկետ և երկարաժամկետ սպառնալիքների մասին՝վերլուծաբանն առանձնացնում է հայկական կողմի մրցունակ առավելությունը՝ միասնականությունը:

«Տևական ժամանակ պատասխանատու գործառույթներ եմ իրականացրել Կանադայի արտաքին գործերի նախարարությունում, հայկական հարցով զբաղվել եմ թե՛ ի պաշտոնե, թե՛ իբրև անհատ: Իմ ուսումնասիրությունները հանգեցրել են այն բանին, որ հայկական կողմի մրցունակ առավելությունը միասնականությունն է, որ իր դրսևորումն է գտնում բոլոր ոլորտներում»,- նկատում է Դ. Քոփլենդը:

Հանդիպման երկրորդ մասում բանախոսը պատասխանել է ներկաների հարցերին:

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՄԻՏԱՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ 45-ԱՄՅԱԿԻՆ

Մայիսի 7-ին բանասիրական ֆակուլտետում կազմակերպված միջոցառումը նվիրված էր ազատամարտիկ-բանաստեղծ Կոմիտաս Հակոբյանին:

Ֆակուլտետի ուսանողները ներկայացրեցին «պատերազմող զինվորի համազգեստում չափածո կրակող» բանաստեղծի՝ ծավալով համեստ, բայց խոսուն գրական ժառանգությունը, ասմունքեցին հատվածներ նրա չափածոյից և գեղարվեստական մանրապատումներ հիշեցնող օրագրային գրառումներից, նաև հայ գրականության երևելիների կարծիքներ՝ բանաստեղծի և նրա պոետական հայտնությունն ազդարարող «Գոյության պատրանք» գրքի մասին:

Կ.Հակոբյանի գրական յուրատիպ ժառանգությունը հերթական անգամ արժևորեցին նրա դասախոսներն ու Արցախի գրական ընտանիքի ներկայացուցիչները, ապա միջոցառմանը հրավիրված բանաստեղծի մայրը, եղբայրը, քույրերը, զարմիկներն ու զարմուհիները:

Մայրն ու քույրերը երախտագիտություն հայտնեցին Կ. Հակոբյանի հիշատակն անմար պահելու, նրան՝ որպես բանաստեղծի պարբերաբար անդրադառնալու և արժևորելու համար:

«Գրիչն ու ավտոմատը մեկտեղած քեռուս ստեղծագործություններին ծանոթանալուց հետո հասկացա, որ մենք կորցրել ենք ոչ միայն խոստումնալից գրական գործչի և զինվորականի, այլև պետականության գաղափարներով տոգորված ապագա գործչի: Նա արժեքներ կերտեց, փոխանցեց մեզ: Նա չեղավ, որ մենք ապրենք»,-ասում է նրա զարմուհին:

Բանասիրական ֆակուլտետի դեկան Լ.Մարգարյանն էլ, ով Կ.Հակոբյանին ճանաչել է պատվո և հերոսության վահանակից, շնորհակալություն հայտնեց բանաստեղծի մորը՝ տիկին Սեդային՝ Կոմիտաս ծնելու և ազգի փրկության զավակը դարձնելու համար: Լ.Մարգարյանը հավաստիացրեց, որ ներկայիս սերունդը կրթվում և դաստիարակվում է կոմիտասների կյանքի և վարքի դասերով:

ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Գրող, հրապարակախոս, լրագրող Արմեն Հովհաննիսյանի ծննդյան 86-րդ տարելիցի նախօրեին բանասիրական ֆակուլտետում կազմակերպվել էր հուշ-ցերեկույթ:

Միջոցառմանը, որին հրավիրված էին Ա. Հովհաննիսյանի գրչընկերները, հարազատներ ու մտերիմներ, ուսանողներ, դասախոսներ և արվեստագետներ, ներկայացվեց Ա. Հովհաննիսյան անհատը, քաղաքացին, բանաստեղծը, հասարակական գործիչը և մեծ հայրենասերը:

Ա. Հովհաննիսյանի մասին իրենց հուշերը կիսեցին Ս. Խանյանը, Ծ. Բաղդասարյանը, Մ. Հաջիյանը, Լ. Քոչարյանը, Ն. Ալեքսանյանը, Ա. Սարգսյանը և թոռնուհին՝ Անի Թովմասյանը: Անին շնորհակալություն հայտնեց ֆակուլտետին և ամբիոնին նախաձեռնողականության, համալսարանականներին՝ մասնակցության համար՝ Ա. Հովհաննիսյանի գրքերից նվիրելով ամբիոնին և ուսանողներին:

«Շնորհակալություն, որ կիսում եք մեզ հետ այս ցավն ու դատարկությունը,- ասում է Անին և խոստովանում,- իմ հուշերի պահոցում դեռ թարմ են պապիս մասին հուշերը, և ես առայժմ պատրաստ չեմ դրանք բացելու ու բացահայտելու»:

Ելույթներն ընդմիջվում էին Ա. Հովհաննիսյանի բանաստեղծությունների արտասանություններով: